ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

12.10.2017թ. ք. Երևան

Երևանի Էրեբունի վարչական շրջանը և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը, այսուհետ՝ Կողմեր,

Նպատակ ունենալով շարունակել օրինակելի փորձի փոխանակման կազմակերպումը, փոխայցելություններ, ընդհանուր նշանակության խնդիրների քննարկումները, ինչպես նաև համագործակցությունը տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում, ելնելով կայունության և փոխշահավետության սկզբունքներից՝ կազմեցին սույն Համաձայնագիրը, որը 10.07.2015թ. կնքված Հուշագրի անբաժանելի մասն է:

Համագործակցությունը ծավալվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում, Կողմերի իրավասության սահմաններում:

Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից և պահվում է կողմերի մոտ՝ մեկական օրինակ:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը վեց ամիս առաջ չի տեղեկացրել մյուս Կողմին Համաձայնագրի կատարումը դադարեցնելու մտադրության մասին:

ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ	ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ	ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)